» Էջմիածնի՝ բաժին արասցէ, ամենեքեանդ հնազանդ լինիք։ Գրեցաւ թվին » Հայոց ՌՃԲ, յապրիլի ԺԵ »։

Նիկողայոս արքեպիսկոպոսն դարձեալ ի Լէօպոլիս՝ գտանէ զնոյն Յօհան վարդապետն, որ էր Արղնցի, այր հանճարեղ և յոյժ գիտուն, որպէս և Վարդան արքեպիսկոպոսն մեր գովէ. սա խոհեմութեամբ իւրով հնազանդեցուցանէ զժողովուրդն՝ Նիկողայոսի, իբրեւ առաջնորդի իւրում, և հաշտեցուցեալ մուծանէ յաթոռակալ եկեղեցին զարքեպիսկոպոսն և զժողովուրդն, ոչ առանց արտասուաց և մեծի խնդութեան երկոցունց կողմանցն։ Զոր լուեալ Եան Գազիմիր թագաւորն, որ յայնժամ էր ի Լէօպոլիս, կոչեալ առ ինքն զՅօհան վարդապետն, բազում շնորհակալութիւն մատուցանէ նմա։ Եւ այնուհետեւ սիրով և խաղաղութեամբ Լէօպոլսեցիքն և միւս քաղաքացիքն վարեցան ընդ Նիկողայոսի արքեպիսկոպոսին իւրեանց, և ընդ յաջորդաց նորին։

1655· ՌՃԴ· Նիկողայոսն իբրեւ հնազանդեցոյց ինքեան զժողովուրդն թեմի իւրոյ, սկսաւ կարգաւորել զհոգեւոր իրողութիւնս եկեղեցեաց իւրոց. թոյլ տուեալ ոմանց իրաց, ոչ առանց խորհրդակցութեան նունցիոսի փափին, առ ժամանակ մի։ Անէ զժողով թեմական յայսմ ամի, ապրիլի 8· առ որ գան և Կամենցացիք. յորում զբազում ինչ կացուցանէ՝ հաւանելով ժողովելոցն, ի տասն կէտս. յորոց չորրորդն է, զի ամուսնութիւնն՝ եթէ յերկոցունց կողմանցն ի չորրորդ աստիճանի իցէ, հաստատապէս հաշակեսցի, բայց ոչ առանց դրամի. բայց այս կէտս յետոյ խափանեցաւ, զի է ընդդէմ կանոնաց Թրիտէնտեան Ս· Ժողովոյն. որպէս տօնի Ծննդեանն Տեառն ընդ Յայտնութեանն առնել. Եայլն։

1657· ՌՃԶ· Սիմոն վարդապետն Զուղայեցի մեռաւ յայսմ ամի. գոլով ի Լէօպոլիս՝ ընդ նուիրակին, ետես զտգիտութիւն իւր, զի և ոչ զքերականութիւն գիտէր. իբրեւ դարձաւ յերկիր իւր՝ այնչափ աշխատեցաւ ինքնին և առ այլս, զի ուսեալ շարադրեաց զՔերականութիւն, որ եթէ այն է՝ զոր ես տեսի՝ ոչ է այնքան քամահելի, թէպէտ ոչ է ըստ արհեստի։

1662· ՌՃԺԱ· Աղեքսանդր Է փափն՝ ի խնդրոյ Նիկողայոսի արքեպիսկոպոսին՝ հեմնէ զԴպրատունն հայրապետական ի Լէօպոլիս, վասն երկոտասան աշակերտաց Հայոց. առաքէ վարդապետ նոցա զԿղեմէս Կալանոսն՝ աստուածաբան վարդապետն, յոյժ հմուտ լեզուին Հայոց, ի կարգէն Թէադինոսաց. յորմէ վարժարանէ ելին և ելանեն այժմ եւս բազում քահանայք՝ վարդապետք և եպիսկոպոսունք իմաստունք։

Նոյն Նիկողայոսն եկեալ ի Կամէնից, ի խնդրոյ դատաւորացն՝ կոնդակաւ վերստին հաստատէ զոր ինչ յառաջագոյն դաշնադրեալն էր. և զՏէր Ներսէսն Հոլոպովիչ օֆիցիալ Կամէնիցու կացուցանէ յամի 1662, նոյեմ. 8։ Եւ այսպէս հանդարտութեամբ և մեղմ յառաջելով՝ ընդելացուցանէր զժողովուրդն։ Մինչեւ ցայս վայր ի Կամէնից ոչ խառնէին քահանայքն զՋուր ի սուրբ